ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77

ք. Վանաձոր

«18» 09 2019թ.

ՀՀ Լոռու մարզի Վանաձորի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Ասլանյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԵՎՏԱՆԻՔ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սեյրան Խանզատյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար Վանաձորի Կ. Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման օրվանից հաշված 120-րդ օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 1460 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային

փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **72 000 000 (յոթանասուներկու միլիոն)** ՀՀ դրամ, որից **12 000 000 (տասներկու միլիոն)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների

կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232001421
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

/ստորագրություն/
L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԳԵՎՏԱՆԻՔ ՍՊԸ
ք.Վանաձոր Թումանյան 7/47
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
Հ/Հ 220053334045000
ՀՎՀՀ 06944677
Տնօրեն՝ Ս. Խանզատյան

/ստորագրություն/
L.S.

Հավելված թիվ 1
«18» 09 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԲՄ ԱՇՁԲ-19/77» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՎԱՆԱՁՈՐԻ Կ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ

Հ/Հ	Հիմնա-վորումը	Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	1 միավ. ընդհա-նուր արժեքը հազ. դրամ	Ընդհա-նուր արժեքը հազ. դրամ
1	2	3	4	5	6	7
		քանդման աշխատանքներ				
1	23-157	տանիքի ցինկապատ թիթեղի ապամոնտաժում/տանիքի ծածկույթ,ջրհորդանի և պիպի ծածկույթ	մ^2	726,20	0,091	66,084
2	8-188	ջրհորդանի ապամոնտաժում	100 գծմ	1,42	26,834	38,104
3	8-191-Բ գ-0,5	Ջրթափ խողովակների ապամոնտաժում g/թիթեղից	կ-տ	9	2,279	20,511
4	8-227-Բ գ-0,5	Ջագարների ապամոնտաժում g/թիթեղից Φ120 մմ	հատ	9	0,273	2,457
5	8-219-Բ գ-0,5	Ծունկերի ապամոնտաժում g/թիթեղից Φ120 մմ	հատ	9	0,326	2,934
6	46-35	պատի շեպերի սվաղի քանդում	100մ^2	0,700	19,699	13,789
7	9-106 գ-0.1	ալյումինե ցուցափեղկերի ապամոնտաժում	100մ^2	3,93	113,456	445,882
8	46-109	գրանիտե հատակների քանդում	մ^2	52,0	0,469	24,388
9	7-736գ-0.6,0.7	աստիճանների մետաղական բազրիքի ապամոնտաժում	100մ	0,60	119,380	71,628
10	շուկա	աստիճանների ալյումինե բազրիքի մոնտաժում	մ	60,00	41,664	2499,840
11	14-320 գ-0.5	առաստաղի մաքրում ներկից	100մ^2	14,02	8,346	117,011
12	14-320 գ-0.5	պատերի մաքրում ներկից	100մ^2	11,55	8,346	96,396
13	23-164 գ-0.5	մանրատախտակե հատակների քանդում /2-րդ, 3-րդ հարկեր/	100մ^2	11,39	30,180	343,750
14	23-169 23-170 գ-0.5	հատակի g/ավազյա նախաշերտի քանդում 3սմ	100մ^2	11,39	23,319	265,603
15	1-968	առաջացած շին աղբի բարձում ձեռքով ինքնաթափ մեքենաների վրա	մ^3	12,00	0,963	11,556
16	Գ130-10	Շին աղբի տեղափոխում մինչև 10կմ	տն	21,60	2,565	55,404
						4075,339
		Բացվածքներ				
1	շուկա	մակատային /ֆասադային/ ցուցափեղկի տեղադրում	մ^2	315,00	36,456	11483,640

2	շուկա	Ալյումինե արտաքին դուռ ապակեփաթեթով , ջերմակամրջով	$մ^2$	9,08	87,089	790,768
3	շուկա	արտաքին ալյումինե ցուցափեղկ ջերմակամրջով և ապակեփաթեթով	$մ^2$	78,61	48,247	3792,697
		Տանիք				*16067,105*
1	8-277	Ջրհորդանի կառուցում գունավոր ց/թիթեղով 0.5մմ հաստ.	մ	142,00	9,231	1310,802
2	շուկա	ց/թիթեղից ռոմբիկների պատրաստում /ջրհորդանի հենարաններ/	հատ	178	0,298	53,044
3	9-24	Տանիքի ծածկույթի իրականացում ց/պրոֆիլավոր թիթեղից գունավոր /ներկված/ ԿՊ-25-0.5	$100մ^2$	6,99	703,047	4914,299
4	10-201	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրդեհապաշտպանում հրակայուն և հականեխիչ լուծույթով	$մ^3$	22,3	7,482	166,849
5	10-203	Կավարամածի փատանյութի մշակում հրակայուն հականեխիչ լուծույթով	$100մ^2$ մշակ. մակ.	4,56	24,503	111,734
6	8-191-Բ	Ջրթափ գունավոր /ներկված/ԿՊ-25-0.5 խողովակների կախում ց/թիթեղից 0,5մմ /առանց ջրթափ խողովակի արժեքի/	կ-տ	9	4,570	41,130
16	Շուկա	Ջրթափ խողովակի ամրացման պլաստմասե էլեմենտներ գործարանային արտադրության/խամուտներ/	հատ	63	0,456	28,728
17	Շուկա	Ջրթափ խողովակ գունավոր ց/թիթեղից 0,5մմ հաստ-մբ, Φ150 մմ	մ	60,0	3,648	218,880
18	8-227-Բ	Ջագարներ գունավոր ց/թիթեղից Φ150 մմ	հատ	9	5,993	53,937
19	8-219-Բ	Ծունկերի գունավոր ց/թիթեղից Φ150 մմ	հատ	9	2,968	26,712
20	7-22	ձեղնահարկի լուսամուտի փայտե շերտափեղկի տեղադրում/4 հատ/	$մ^2$	1,56	1,940	3,026
21	շուկա	փայտե չորսու	$մ^3$	0,044	194,084	8,540
22	շուկա	հղկված տախտակ 115x12մմ	$մ^3$	0,0600	194,084	11,645
23	շուկա	ծխնիներ	հատ	8	0,608	4,864
24	8-279	ձեղնալուսամուտի պատերի երեսապատում գունավոր ց/թիթեղով 0,5մմ	$100մ^2$	0,14	596,482	83,507
25	8-279	պիպերի տեղադրում գունավոր ց/թիթեղով 0,55մմ	$100մ^2$	0,272	596,482	162,243
		Հատակներ				*7199,940*
1	11-55 11-56	Ցեմ, ավազային հարթ շերտի կառուցում 35մմ հաստ	$100մ^2$	11,390	152,229	1733,888
2	5-115	հատակներ մամլոգրանիտե սալիկներից	$մ^2$	1139,0	23,959	27289,301
3	11-135	շրիշակների կառուցում մամլոգրանիտե սալիկներից 10սմ բարձր.	$100մ^2$	0,072	2395,331	172,464
4	5-130	գրանիտե հատակի նորոգում սալիկներով 30մմ հաստ	$մ^2$	52,0	18,510	962,520
5	շուկա	գրանիտե հատակների հղկում	$մ^2$	192	1,953	374,976
6	շուկա	աստիճանների և աստիճանաճակատների գրանիտե սալիկների հղկում	$մ^2$	98	1,953	191,394
		Ներքին հարդարում				*30724,543*
1	11-64	առաստաղի սվաղի վերանորոգում գաջե շաղախով	$մ^2$	12,0	3,108	37,296
2	11-179	առաստաղի լավորակ սվաղում գաջի շաղախով	$մ^2$	38,0	2,871	109,098

3	11-57	Պատերի սվաղի վերանո-րոգում գաջե շաղախով	100մ^2	1.22	364,774	445,024
4	11-188	ներքին շեպերի լավորակ սվաղում գաջի շաղախով	100մ^2	0.70	388,325	271,828
5	13-66	ֆելզիտե սալիկների նորոգում 30մմ հաստ	մ^2	15,00	16,415	246,225
6	14-418	պատերի և շեպերի լավորակ ներկում լատեքս ներկով ծեփանածկումով	100մ^2	12,25	103,830	1271,918
7	14-419	առաստաղի լավորակ ներկում լատեքս ներկով ծեփամածկումով	100մ^2	14,02	117,423	1646,270
						4027,659
Ներքին լուսավորություն						
		Ուժային և լուսավորության էլեկտրասարքավորումների ապամոնտաժում				
1	8-612-2 գ-0.5	մուտքի բաշխիչ վահանի ապամոնտաժում	հատ	1	1,693	1,693
2	8-612-2 գ-0.5	լուսավորության 6 խմբային վահանակի ապամոնտաժում	հատ	2	1,693	3,386
3	8-612-2 գ-0.5	լուսավորության 12 խմբային վահանակի ապամոնտաժում	հատ	1	1,693	1,693
4	8-603-1 գ-0.5	Լումինեսցենտային լամպերով առաստաղային լուսատուների ապամոնտաժում	հատ	160	0,378	60,480
5	8-603-1 գ-0.5	շիկացման լամպերով կախովի լուսատուների ապամոնտաժում	հատ	15	0,378	5,670
6	8-603-1գ-0.5	շիկացման լամպերով առաստաղային լուսատուների ապամոնտաժում	հատ	30	0,378	11,340
7	8-591-2 գ-0.5	Փակ լարանցման միաբևեռ անջատիչ 250Վ 6Ա IP20	հատ	22	0,104	2,288
8	8-591-10 գ-0.5	Փակ լարանցման երկբևեռ անջատիչ 250Վ 6Ա IP20	հատ	3	0,299	0,897
9	10-975-8 գ-0.5	տուփ վարդակի և անջատիչի փակ տեղադրման	հատ	46	0,482	22,172
10	10-975-8 գ-0.5	բաժանարար տուփ փակ տեղադրման	հատ	35	0,482	16,870
		Ուժային էլեկտրասարքավորումների մոնտաժում				
1	8-612-2	գլխավոր բաշխիչ վահան 380/220v 225A կազմված ա / եռաբևեռ ավտոմատ անջատիչ I=225A 380V ներանցման n=1 բ/ եռաբևեռ ավտոմատ անջատիչ 380V 50A ներանցման n=2 գ/ եռաբևեռ ավտոմատ անջատիչ I=32A 380V բաշխման 4 հատ	կ-տ	1	41,371	41,371
2	8-612-2	բաշխիչ վահան 380/220v50A կազմված ա/վահանակ պոլիստիրոլե 36 մոդուլ չափ 555x330x86մմ - n=1 բ/ եռաբևեռ ավտոմատ անջատիչ C դասի,6kA կոմուտացիոն ունակության 380v50A ներանցման, n=1 գ/միաբևեռ ավտոմատ անջատիչ C դասի,6kA կոմուտացիոն ունակության 380v16A բաշխման, n=6 դ/միաբևեռ ավտոմատ անջատիչ C դասի,6kA կոմուտացիոն ունակության 380v25A բաշխման, n=3	լրա-կազմ	6	41,371	248,226
3	շուկա	պաշտպանիչ երկբևեռ անջատման սարք 220v,40A/30mA h/a	հատ	18	6,076	109,368
4	շուկա	պաշտպանիչ երկբևեռ անջատման սարք A տիպի 220v,63A/30mA h/a	հատ	6	6,076	36,456
5	8-591-7	վարդակ երկբևեռ 3-դդ հողանցման հպակով 220Վ 16Ա IP20 փակ տեղադրման	100 հատ	0,74	129,921	96,142
6	10-975-8	տուփ վարդակիփակ տեղադրման	100 հատ	0,74	115,751	85,656

7	10-975-8	բաժանարար տուփ փակ տեղադրման	100 հատ	0.60	115,751	69,451
8	21-103	Պղնձե ջիղերով բազմալար մալուխի անցկացում սվաղի տակ ՎՎԳ 3x2.5մմ^2	100մ	2.20	78,225	172,095
9	21-103	Պղնձե ջիղերով բազմալար մալուխի անցկացում սվաղի տակ ՎՎԳ 3x4մմ^2	100մ	5.20	91,895	477,854
10	21-103	Պղնձե ջիղերով բազմալար մալուխի անցկացում սվաղի տակ ՎՎԳ 5x16մմ^2	100մ	1,90	92,047	174,889
11	շուկա	խողովակ ՊՎՔ գեֆրա d=32մմ	մ	190,0	0,152	28,880
12	8-613-2	արկղ գլխավոր հողակցվող հաղորդաձողով պղնձե 25 x 3 մմ2 ,IH=340A	հատ	1	5,611	5,611
13	շուկա	մալուխային ծայրակալ պղնձե ջիղի համար 1 x 25	հատ	2	0,456	0,912
14	շուկա	հեղույս M12x 40	հատ	2	0,152	0,304
15	շուկա	մանեկ M12	հատ	2	0,076	0,152
16	21-103	Պղնձե ջիղերով հաղորդալարի անցկացում սվաղի տակ ՊՎ 1x2.5մմ^2	100մ	0,20	32,041	6,408
17	շուկա	խողովակ գոֆրա /ՊՎՔ/ Φ20մմ	մ	20,0	0,152	3,040
18	8-472-2	Պողպատ շերտավոր 40x4	մ	40,0	0,777	31,080
19	8-471-1	Պողպատե անկյունակ L50x50x5 l=2.5 /հողանցման համար/	հատ	6	6,666	39,996
		Լուսավորության էլեկտրաապարատների մոնտաժում				
1	8-603-1	Լուսատու LED առաստաղային IP20 4000k,2850lm,30w	հատ	190	19,742	3750,980
2	8-603-1	Լուսատու LED լամպով պատի 18w ,IP65 պ/ա IP654000k,1400lm	հատ	24	7,590	182,160
3	8-603-1	Լուսատու LED պատիIP20 4000k,2000lm,30w	հատ	59	6,071	358,189
4	8-603-1	Լուսատու 3.6w ,LED լամպով ,,EXIT,, ցուցանակով պատի,IP20	հատ	16	6,071	97,136
5	շուկա	լամպ LED 220v,18w	հատ	24	1,519	36,456
6	շուկա	լամպ LED 220v,30w	հատ	59	2,278	134,402
7	8-591-2	Փակ լարանցման միաբևեռ մեկստեղնավոր անջատիչ 250Վ 10Ա	հատ	50	2,025	101,250
8	8-591-10	Փակ լարանցման միաբևեռ երկստեղնավոր անջատիչ 250Վ 10Ա	հատ	40	2,402	96,080
9	10-975-8	տուփ անջատիչի փակ տեղադրման	հատ	90	1,179	106,110
10	10-975-8	տուփ բաժանարար փակ տեղադրման	հատ	70	1,179	82,530
11	21-103	Պղնձե ջիղերով ՊՎՔ մեկուսացումով հաղորդալարի անցկացում սվաղի տակ ՊՊՎ 2x2.5մմ^2	100մ	25,00	38,117	952,925
12	21-103	Պղնձե ջիղերով ՊՎՔ մեկուսացումով հաղորդալարի անցկացում սվաղի տակ ՊՊՎ 3x2.5մմ^2	100մ	7.00	59,837	418,859
13	21-103	Պղնձե ջիղերով ՊՎՔ մեկուսացումով հաղորդալարի անցկացում սվաղի տակ ՊՎ 1x1.5մմ^2	100մ	2.50	27,181	67,953
14	շուկա	առաստաղային կալորիֆերի տեղադրում 20կվտ հզոր.	հատ	48	62,312	2990,976
15	շուկա	խողովակ գոֆրա /ՊՎՔ/ Φ15մմ	մ	100,0	0,122	12,200
		Ընդամենը՝				*11142,585*
		Ընդհանուրը՝				*73237,170*
		ԱԱՀ	20%			*14647,434*
		Ընդամենը՝				*87884,604*

Գնման առարկա է հանդիսանում Վանաձորի Կ. Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքները, որոնք ընդգրկում են՝

- Քանդման աշխատանքներ
- Արտաքին դռների և վիտրաժների փոխարինում
- Տանիքի հիմնանորոգում
- Հատակների հիմնանորոգում պրեսգրանիտե սալերից
- Ներքին հարդարման իրականացում
- Էլ. լուսավորության համակարգի ամբողջական վերակառուցում
- Էլ. Ուժային սարքավորումների տեղադրում

Աշխատանքների համար երաշխիքային ժամկետ է համարվում 1460 օրը:
Աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվում պայմանագրի կնքման օրվանից հաշված 120 օր:
Աշխատանքներն իրականացնել հատուկ բանվորական արտահագուստով՝ պահպանելով անվտանգության կանոնները:
Յուրաքանչյուր կատարողական կամ հանձնման-ընդունման փաստաթղթերի հետ ներկայացնել օգտագործվող շինարարական նյութերի փորձարկման ակտերը, կամ սերտիֆիկատները գործող ստանդարտներին համապատասխան:
Կից ներկայացվում է ծավալաթերթը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232001421
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԳԵՎՏԱՆԻՔ ՍՊԸ
ք.Վանաձոր Թումանյան 7/47
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
Հ/Հ 220053334045000
ՀՎՀՀ 06944677
Տնօրեն՝ Ս. Խանզատյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«13» 09 2019թ. կնքված
«ՀՀ ԼՄՎՔ ԲՄ ԱՇՁԲ-19/77» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՎԱՆԱՁՈՐԻ Կ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆ ՀՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Վանաձորի Կ. Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքներ	Պայմանագրի կնքման պահից	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 120-րդ օրը
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագրի կնքման պահից	Պայմանագրի կնքման օրվանից հաշված 120-րդ օրը

15.01.2020

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232001421
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԳԵՎՏԱՆԻՔ ՍՊԸ
ք.Վանաձոր Թումանյան 7/47
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
Հ/Հ 220053334045000
ՀՎՀՀ 06944677
Տնօրեն՝ Ս. Խանզատյան

/ստորագրություն/
Կ.Տ.

«18» 09 Հավելված N 3
2019թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄ ԱՇՁԲ-19/77 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45611200	Վանաձորի Կ. Աբովյանի անվան կերպարվեստի թանգարան ՀՈԱԿ-ի հիմնանորոգման աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	72 000 000	72 000 000	72 000 000	72 000 000	72 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Վանաձորի համայնքապետարան
ք.Վանաձոր Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232001421
ՀՎՀՀ 06901936
Մ.Ասլանյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ԳԵՎՏԱՆԻՔ ՍՊԸ
ք.Վանաձոր Թումանյան 7/47
Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ
Հ/Հ 220053334045000
ՀՎՀՀ 06944677
Տնօրեն՝ Ս. Խանզատյան

/ստորագրություն/

Հավելված թիվ 4
« » 2019թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2019թ. կնքված
ՀՀ ԼՄՎՔ ԲՄԱՇՁԲ-19/77ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն